



Ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից



## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

### «Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրու երիտասարդների հզորացում» ծրագրի

#### ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄ

«Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի երիտասարդական աշխատող:

#### ՀԱՍՏԻՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնում անհատական և խմբային երիտասարդական աշխատանք և աուբրիջ աշխատանք, լրիվ դրույք (40 ժամ/շաբաթ)

#### ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱԿԱՐ

Կենտրոնի համակարգող

#### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Պատրաստել և անցկացնել անհատական կամ խմբային աշխատանքներ / գործողություններ երիտասարդների համար,
- Կազմակերպել և/կամ իրականացնել թեմատիկ աշխատանքային հանդիպումներ,
- Իրականացնել անհատական երիտասարդական աշխատանք / անհատական խորհրդատվություն,
- Աջակցել Կենտրոնի կամավորներին՝ իրականացնելու աշխատանքային հանդիպումներ,
- Ցուցադրել տարիքներին համապատասխան ֆիլմեր,
- Իրականացնել աուբրիջ երիտասարդական գործողություններ,
- Իրականացնել ցանցային աշխատանք գործընկեր կազմակերպությունների և կրթական հաստատությունների հետ,
- Պահպանել Կենտրոնի առօրյա փաստաթղթերը,
- Կենտրոնի համակարգողին ներկայացնել շաբաթական հաշվետվություն,
- Տեղեկատվություն տրամադրել հետազոտության և տվյալների բազայի համար,
- Պահպանել Կենտրոնի կարգուկանոնը և մաքրությունը և ապահովել գույքի բարվոք վիճակը,
- Պահպանել Կենտրոնում իրականացվող գործողությունների անհրաժեշտ փաստաթղթերը և գործընթացները (օրակարգ, դիմումներ, գրանցում),
- Մասնակցել ծրագրային թիմի հանդիպումներին,
- Աջակցել Կենտրոնի համակարգողին ծրագրին առնչվող այլ հարցերում:

#### ԱՆՐԱՃԵՃ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Կրթության, սոցիալական աշխատանքի, կամ հարակից բնագավառներում բակալավրի աստիճան,
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ կրթական կամ սոցիալական հաստատություններում,
- Գիտելիքներ երիտասարդական և ոչ-ֆորմալ կրթության ոլորտներում (փորձառությունը նախընտրելի է),
- Երեխայի / երիտասարդի հոգեբանության մասին գիտելիքներ և զգայնություն,
- Ուղղորդելու և խորհրդատվություն տալու հմտություններ,
- Թիմում աշխատելու հմտություններ,
- Բարձր միջմշակութային հմտություններ,
- Բանակցելու և կոնֆլիկտների հանգուցալուծման հմտություններ,
- Հաղորդակցման և հռետորական հմտություններ,
- Հայերենի գերազանց իմացություն, անգլերենի և ռուսերենի իմացությունը ցանկալի է,
- Թվային սարքավորումներից օգտվելու և գրաֆիկական ծրագրերի իմացությունը ցանկալի է,
- Համակարգչից և համացանցից օգտվելու գերազանց հմտություններ:

❖ Աշխատողի աշխատանքային գրաֆիկը կազմվում է համաձայն Կենտրոնի աշխատանքային ժամերի:

«Բաց երիտասարդական աշխատանք. Գյումրիում երիտասարդների հզորացում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի փոքր դրամաշնորհային նախագծի շրջանակներում՝ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ և «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն - Հայաստան» հիմնադրամ կոնսորցիումի կողմից: